Գիտություն և տեխնոլոգիաներ, կրթություն, երիտասարդության հարցեր և մասնագիտական վերապատրաստում

1. Գիտություն և տեխնոլոգիաներ

Գիտության և տեխնոլոգիաների բնագավառի խնդիրներին վերաբերող ԵՄ օրենսդրությունը հիմնականում բաղկացած է գործողությունների ծրագրերից, ռազմավարություններից և քաղաքականություններից, ուստի և օրենսդրական համապատասխանեցման անհրաժեշտություն չի առաջանում: Այնուամենայնիվ, մինչև 2008 թվականը քայլեր կձեռնարկվեն ապահովելու համար ՀՀ մասնակցությունը ԵՄ կողմից իրականացվող ծրագրերին և մասնավորապես Վեցերորդ հիմնարար ծրագրին:

2. Կրթություն

Ներածություն

Կրթության բնագավառում Եվրամիությունը չի իրականացնում ընդհանուր կրթական քաղաքականություն: Համայնքների դերը այս ոլորտում համագործակցության համակարգի ստեղծումն է՝ միաժամանակ լիովին պահպանելով անդամ պետությունների լիազորությունները կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտների կարգավորման հարցում: Ուստի և ԵՄ կրթության բնագավառում առկա չեն ընդհանուր իրավական ակտեր: Միակ իրավական նորմատիվ ակտը այս բնագավառում ունի սոցիալական ուղղվածություն և վերաբերում է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող աշխատողների երեխաների կրթությանը[1]: Վերոնշյալ ակտի դրույթները նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ:

Այնուամենայնիվ, ԵՄ-ն իրականացնում է բազմաթիվ կրթական ծրագրեր[2], որոնք կարգավորվում են կոմյունիկեների, առաջարկությունների միջոցով և ներկա փուլում ենթակա չեն օրենսդրական համապատասխանեցման:

Հայաստանը ներգրավված է այնպիսի համագործակցության ծրագրերում, ինչպիսիք են «Բոլոնիայի գործընթացը», «Ազգային փոքրամասնությունները և կրթական քաղաքականությունը», «Ժողովրդավարական քաղաքացիությունը կրթության միջոցով» և այլն: Այդուհանդերձ, ՀՀ օրենսդրությունը չի ներառում ԵՄ կրթական ռազմավարական ծրագրերին համահունչ և ՀՀ կրթության ոլորտը ամբողջովին կարգավորող իրավական ակտեր: Մինչդեռ Եվրամիությունը խրախուսում է նոր մեթոդներով ուսուցման, փոխանակման ծրագրերի իրականացումը, ԵՄ կրթական չափորոշիչներին համապատասխանող չափորոշիչների ընդունումը, պետական աջակցության տրամադրման չափանիշների հստակեցումը և այլն:

2006 թվական

Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտը ԵՄ օրենսդրությանը և մասնավորապես 1977թ. հուլիսի 25-ի՝ «Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող աշխատողների երեխաների կրթության մասին» թիվ 77/486 դիրեկտիվին համապատասխանեցնելու նպատակով 2006 թվականի չորրորդ եռամսյակում կիրականացվեն «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքները:

3. Երիտասարդության հարցեր

Երիտասարդության հարցերին և սպորտին առնչվող ԵՄ օրենսդրությունը հիմնականում բաղկացած է գործողությունների ծրագրերից և բանաձևերից, ուստի օրենսդրական համապատասխանեցման անհրաժեշտություն չի առաջանում: Այդուհանդերձ, մինչև 2008 թվականը քայլեր կձեռնարկվեն ապահովելու համար ՀՀ մասնակցությունը ԵՄ կողմից իրականացվող ծրագրերին, մասնավորապես, երիտասարդների փոխանակման, զբաղվածության և վերապատրաստման խնդիրներին:

---

[1] 1977թ. հուլիսի 25-ի դիրեկտիվ թիվ 77/486՝ «Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող աշխատողների երեխաների կրթության մասին»:

[2] «Socrates» կրթական ծրագիր, բարձրագույն կրթության տրանս-եվրոպական համագործակցություն, «EURYDICE» կրթական տեղեկատվական համակարգ:

4. Մասնագիտական կրթություն

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում կրթության և մասնագիտական վերապատրաստման բնագավառում բացակայում են ԵՄ օրենսդրությամբ նախատեսված մարմինների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը[3], դրանք են՝

- Մասնագիտական կրթության զարգացման կենտրոնը,
- Մասնագիտական կրթության հիմնադրամը,
- Մասնագիտական կրթության ոլորտում խորհրդատվական հանձնաժողովը:

2007 թվական

ՀՀ մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը նպաստելու նպատակով և ԵՄ իրավական ակտերի[3] պահանջներին համապատասխան՝ առաջարկվում է մինչև 2008 թվականը համալրել կրթության բնագավառի ինստիտուցիոնալ կարողությունները հետևյալ մարմիններով.

- **Մասնագիտական կրթության զարգացման կենտրոնը**, որի հիմնական նպատակն է մասնագիտական կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը, ինչպես նաև ուսումնական հաստատությունների գործունեության համակարգումը: Համաձայն 1975թ. փետրվարի 10-ի՝ «ԵՄ մասնագիտական կրթության զարգացման կենտրոն ստեղծելու» մասին թիվ 337/75 կանոնակարգի՝ կենտրոնը նախատեսվում է ստեղծել 2007թ. կառավարության որոշումով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ:

- **Մասնագիտական կրթության հարցերով խորհրդատվական հանձնաժողովը,** որի հիմնական լիազորությունը խորհրդատվական և տեղեկատվական գործունեության իրականացումն է: Համաձայն 2004թ. փետրվարի 26-ի՝ «ԵՄ մասնագիտական կրթության ոլորտում խորհրդատվական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 2004/223 որոշման՝ Հանձնաժողովը կհիմնադրվի 2007թ. ՀՀ կառավարության որոշումով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ:

- **Մասնագիտական կրթության հիմնադրամը,** որի հիմնական նպատակն է ֆինանսական աջակցության տրամադրումը մասնագիտական կրթության զարգացման ծրագրերի իրագործման համար: Համաձայն 1990թ. մայիսի 7-ի՝ «Մասնագիտական կրթության ֆոնդ ստեղծելու մասին» թիվ 1360/90 կանոնակարգի՝ հիմնադրամը կստեղծվի 2007թ. կառավարության որոշումով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ:

---

[3] 1975թ. փետրվարի 10-ի կանոնակարգ թիվ 337/75՝ «ԵՄ մասնագիտական կրթության զարգացման կենտրոն ստեղծելու մասին», 1990թ. մայիսի 7-ի կանոնակարգ թիվ 1360/90՝ «Մասնագիտական կրթության հիմնադրամ ստեղծելու մասին», 2004թ. փետրվարի 26-ի որոշում թիվ 2004/223՝ «Մասնագիտական կրթության ոլորտում խորհրդատվական հանձնաժողով ստեղծելու մասին»:

2.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	«Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1977թ. հուլիսի 25-ի «Օտարերկյա քաղաքացիություն ունեցող աշխատողների երեխաների կրթության մասին» թիվ 77/486 դիրեկտիվ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	

4.1. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Մասնագիտական կրթության զարգացման կենտրոն ստեղծելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում 1975թ. փետրվարի 10-ի «ԵՄ Մասնագիտական կրթության Զարգացման Կենտրոն ստեղծելու մասին« թիվ 337/75 կանոնակարգ *2007թ.*		Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Մասնագիտական կրթության հարցերով խորհրդատվական հանձնաժողով ստեղծելու մասին« կառավարության որոշման նախագծի մշակում 2004թ. փետրվարի 26-ի «Մասնագիտական կրթության ոլորտում Խորհրդատվական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 2004/223 որոշում *2007թ.*		Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Մասնագիտական կրթության հիմնադրամ ստեղծելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում 1990թ. մայիսի 7-ի «Մասնագիտական կրթության հիմնադրամ ստեղծելու մասին» թիվ 1360/90 կանոնակարգ *2007թ.*		Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն